

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
36

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
36

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

36

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան
Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 36, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2023, 304 էջ:*

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ
PUBLICATIONS
ПУБЛИКАЦИИ

ԷՍԹԵՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ*

DOI:10.57155/FHGB4992

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐՉԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ
ՏԵՍԻԼ-ՀԱՐՑՈՒՄԸ
(ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆԱԳԻՐ)

Բանալի բառեր՝ Գրիգոր Լուսավորիչ, տեսիլ, քարոզ, թարգմանություն, հոգու և մարմնի երկխոսություն, բնագրի հրատարակություն:

Գրիգոր Լուսավորչի կյանքի, գործունեության և ուսմունքի մասին բնագրերը լայն շրջանառություն են ունեցել Մերձավոր Արևելքի քրիստոնյաների շրջանում: Դրանք թարգմանվել և ընդօրինակվել են հայերեն, ասորերեն, վրացերեն, ղպտերեն պահպանված միջնադարյան գրավոր հուշարձաններում:

Լուսավորչի շուրջ հյուսված հսկայածավալ մատենագրությունը պարունակում է ինչպես կանոնիկ գրվածքներ, ճառեր, մեկնություններ, վարքեր, այնպես էլ պարականոններ, տեսիլներ: Սույն հոդվածում կհետազոտենք միջնադարյան հայկական աղբյուրներում բազմիցս ընդօրինակված և համեմատաբար քիչ ուսումնասիրված ստեղծագործություններից մեկը՝ Գրիգոր Լուսավորչի անունով շրջանառվող տեսիլ-հարցումը¹:

Տեսիլի ծագման և բովանդակային հարցերը 1900-ականների կեսերից սկսած եղել են հայ հետազոտողների հետաքրքրության առարկան: Վերջիններս փորձել են պարզել, թե երբ է գրվել տեսիլը, ինչ աղբյուրներից է ազդված և կամ

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, կրտսեր գիտաշխատող, esterpetrosyan91@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ սեպտեմբերի 6, 2023, հոդվածը գրախոսելու օրը՝ նոյեմբերի 11, 2023 թ.:

¹ Զվիթթել Լուսավորչի Վաղարշապատի տեսիլի հետ, որը նկարագրված է Ագաթանգեղոսի Պատմության մեջ: Այդ տեսիլում Լուսավորչին ակամատես է լինում, թե ինչպես է Աստծո Ուրիմ երկնից իջնում և ցույց տալիս հոգևոր առաջին կառույցի տեղը: Տե՛ս Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմանությունը և ծանոթագրությունները Արամ Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 412-427:

ինչ դավանաբանական հարցեր են արծարծվում դրանում: Մինչ այս կատարված հետազոտությունները նվիրված են տեսիլի մեկ բնագրի, կամ դրա մի հատվածի ուսումնասիրությանը: Սակայն այն չի դիտարկվել ձեռագրային ավանդույթի համատեքստում կամ տարբեր խմբագրությունների համեմատության առումով: Խորապես չի ուսումնասիրվել դրա նշանակությունը հայ գրականության, կրոնական պատմության խնդիրների առնչությամբ: Տեսիլի ծագման ժամանակաշրջանի, շրջանակների, նպատակի հանգամանքները մնում են բաց, մանրամասնորեն չի դիտարկվել դրա՝ հայ-ասորական գրական, մշակութային և կրոնական կապերի արգասիք լինելու հավանականությունը:

Տեսիլների ժանրը բնութագրելու համար համաշխարհային գրականության մեջ օգտագործվում է հունարեն ἄποκάλυψις եզրույթը («հայտնություն, բացահայտում»): Այն գործածության մեջ է մտել համեմատաբար ուշ շրջանում, թեև որոշ եբրայական, քրիստոնեական և գնոստիկյան բնագրեր հենց ձեռագրերում վերնագրված են ապոկալիպսիս: Քանի որ այս ժանրի բնագրերի մեծ մասում եզրույթի կիրառությունը հստակ չէ, առաջ է գալիս նմանատիպ բովանդակությանը տարբեր գրվածքների դասակարգման խնդիր²:

Ժանրին պատկանող տեքստերն ունեն բովանդակային որոշակի առանձնահատկություններ՝ հայտնություն, որի միջոցով պատկերանում է բովանդակությունը, ճանապարհորդություն դեպի անդրաշխարհ, փրկության և հարության տեսարանների նկարագրություններ, հրեշտականման կամ սատանայական արարածների ներգրավվածություն և այլն³: Սակայն ժանրին պատկանող երկերի միջև կան նաև զգալի զանազանություններ, որովհետև դրանք ծագել են այլևայլ աղբյուրներից և ստեղծվել տարբեր միջավայրներում: Յուրաքանչյուր բնագիր ունի իր առանձնահատկությունները և կարող է պարունակել վերը թվարկված ոչ բոլոր կետերը: Այնուամենայնիվ, դրանցից գոնե մի քանիսի առկայությունը պարտադիր է՝ երկը տեսիլ համարելու համար:

Անդրադառնալով նմանատիպ գրվածքների դասակարգման հարցին՝ Աստվածաշնչյան գրականության ընկերության դեռևս 1979 թվականին հրատարակված գրքում առաջ է քաշվել հետևյալ սահմանումը՝ «Ապոկալիպսիսը պատմողական կառուցվածք ունեցող, հայտնության թեման ներկայացնող գրական ժանր է, որում այլաշխարհիկ էակի միջնորդությամբ մարդը (ստացողը) ստանում է հայտնություն՝ բացահայտելով մի անդրանցական իրականություն, որը և՛ ժամանակային է, որքանով որ ենթադրում է վախճանաբանական փրկու-

² *Apocalypse: The Morphology of a Genre*, ed. by **J. J. Collins** (Semeia, no. 14), SBL, 1979, p. 2-3.

³ Նույն տեղում, էջ 5-8:

թյուն, և՛ տարածական՝ այնքանով, որքանով ներառում է մեկ այլ՝ գերբնական աշխարհ»⁴:

Այսպիսով ժանրից դուրս են մնում մարգարեությունները, գուշակությունները, անհայտը բացահայտող կանխասացությունները, քանի որ դրանցից յուրաքանչյուրը միայն մեկ կամ երկու կետով է համապատասխանում սահմանմանը:

Լուսավորչի տեսիլի բովանդակությունը բավարարում է Աստվածաշնչյան գրականության ընկերության սահմանած ձևակերպմանը: Առկա է հայտնության պատմություն, որտեղ գործող անձանց թվում կա առեղծվածային էակ՝ հրեշտակ, որի հետ երկխոսության միջոցով ս. Գրիգորը բացահայտում է այլաշխարհի գաղտնիքները և պարզում, թե ինչ է սպասվում ֆիզիկական մահից հետո:

Հայերեն ձեռագրերում Լուսավորչի տեսիլը հաճախ ընդօրինակվել է ժողովածուներում, ճառընտիրներում կամ ոսկեփորիկներում և վերնագրվել «տեսիլ», «հարցումն», «հարցմունք», «պատմութիւն» կամ «հարցաքննութիւն»:

Բնագիրը աստվածաբանական երկասիրություն չէ, այլ հավատացյալներին ուղղված հանրամատչելի բարոյախոսական քարոզ: Դրանում տեղ գտած սրբակենցաղության քարոզն ուղղված է լայն լսարանի, հետևաբար արտահայտված գաղափարները պարզ են, ձևակերպումները՝ մատչելի: Դյուրահաղորդ լինելուն նպաստում է նաև տեսիլը երկխոսության և հարցուպատասխանի ձևով ներկայացնելը:

Տեսիլում նկարագրվում են երևակայական վայրեր, իրադարձություններ և զգացողություններ, որոնք մահացածի հոգին տեսնում և զգում է մարմնից անջատվելուց հետո՝ որպես այս աշխարհում գործած տարբեր ծանրության մեղքերի հետևանք: Այսպիսով եկեղեցու դավանած բարոյախրատական նորմերը, խոստացվելիք պատիժներն ու պարգևատրումները տեսիլի միջոցով դադարում են վերացական լինելուց և դառնում առարկայական ու շոշափելի, ընկալելի հավատացյալի համար:

Համաձայն բնագրի՝ Լուսավորիչը միայնացել և մտորում է մարդկանց հոգիների մասին, այն մասին, թե ինչ է լինում մահից հետո: Անսայով Սբ. Գրիգորի խնդրանքին՝ Աստված երկնքից հրեշտակ է ուղարկում, որը տալիս է Լուսավորչին հուզող հարցերի պատասխանները: Բնագրերում անհամաձայնություն կա սրբի գտնվելու վայրի մասին: Երբեմն չի նշվում, թե որտեղ էր նա գտնվում (ՄՄ 991, ՄՄ 992), որոշ բնագրերում հստակեցվում է, որ տեսիլը տեղի է ունենում Մանեա այրում (ՄՄ 1475, ՄՄ 2004, Վնտկ. 570) կամ անանուն մի քարանձա-

⁴ “Apocalypse is a genre of revelatory literature with a narrative framework, in which a revelation is mediated by an otherworldly being to a human recipient, disclosing a transcendent reality which is both temporal, insofar as it envisages eschatological salvation, and spatial insofar as it involves another, supernatural world.” Տե՛ս նույն տեղում, էջ 10:

վում (ՄՄ 2546), իսկ մի քանիսում էլ հիշատակվում է անհայտ ճգնարան «անապատը» (ՄՄ 11, ՄՄ 2111): Մեզ հայտնի մեկ այլ բնագրում էլ՝ ՄՄ 3208, գրված է «եմուտ ի սենեակ եկեղեցոյն»: Բնագրերից մի քանիսում պատասխանողը Գաբրիել հրեշտակապետն է (ՄՄ 696, ՄՄ 991, ՄՄ 992, ՄՄ 2782, ՄՄ 2890), երբեմն՝ Միքայելը (ՄՄ 682, ՄՄ 2168, ՄՄ 2245, ՄՄ 3237), սակայն մեծ մասամբ հանդես է գալիս անանուն մի հրեշտակ: Տեսիլը սովորաբար վերագրվում է Սբ. Գրիգոր Լուսավորչին: Նրա անունը նշվում է բացառապես խորագրերում կամ բնագրի առաջին տողում: Բուն տեքստում հիշատակվում է միայն Սբ. Գրիգոր անունը: Ավելին, Լուսավորչի անունը բացակայում է մի շարք բնագրերի խորագրերում, որոնցում պարզապես կարդում ենք՝ «տեսիլ սբ. Գրիգորի», առանց լրացուցիչ հստակեցման (ՄՄ 2650, Վնտկ. 617): Երբեմն էլ նրա անունը բնագրերում հիշատակվում է Գրիգորիոս տարբերակով (ՄՄ 2650, Վնտկ. 570):

Հավանաբար տեսիլն ի սկզբանե չի կապվել Լուսավորչի անվան հետ, այլ նրան է վերագրվել հետագայում՝ բնագիրն ավելի արժանահավատ և ընդունելի դարձնելու միտումով: Այս նպատակով են նաև հետագա որոշ բնագրերում հստակեցվել հրեշտակների անունները, ինչպես նաև այրի անվանումը, որտեղ տեղի է ունենում հայտնությունը: Անանուն կամ անհայտ անձանց վերագրվող գրվածքները վստահելի և ընդունելի դարձնելու համար հետագա գրիչները դրանք երբեմն կապել են հայտնի և հեղինակավոր գործիչների անունների հետ՝ դրանով կարևորություն և ազդեցություն տալով տեքստին⁵: Այսպիսով, փաստորեն, կարող ենք խոսել Կեղծ-Լուսավորչի տեսիլի մասին: Այս բնորոշումը ոչ միայն կվերհանի դրա ծագման հետ կապված խնդիրները, այլև կօգնի հետագա հետազոտողին և ընթերցողին՝ այն շփոթել Սբ. Գրիգոր Լուսավորչի Վաղարշապատի տեսիլի հետ:

Տեսիլի՝ այլ լեզվից թարգմանված լինելու հնարավորությունը, եթե չհաշվենք մեկ-երկու հակիրճ ակնարկ, որոնք կքննարկենք ստորև, դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից: Մեծ մասամբ կասկածի տակ չի դրվել նաև տեսիլը Գրիգոր Լուսավորչին վերագրելու հանգամանքը, ինչն ավելի քան բնական է, քանի որ, ինչպես նշեցինք, հայերեն պահպանված տեսիլի բնագրերի զգալի մասում հստակորեն նշվում է Լուսավորչի անունը: Տեսիլի հետագայում գրվելու և դրա արժեքը բարձրացնելու միտումով Լուսավորչին վերագրելու

⁵ Այդպիսի օրինակ է արաբերեն զարշունիով (ասորաաա արաբերեն) պահպանված և ձեռագրերում բազմիցս ընդօրինակված Սբ. Գրիգորի տեսիլը, որը հետագա աղբյուրներում գրիչները վերագրել են Գրիգոր Նյուսացուն կամ Գրիգոր Նազիանզացուն: Տե՛ս ՄՄ Այլալեզու ձեռագիր 2^ա 176, 14ա-33բ:

Georg Graf, *Geschichte der Christlichen Arabischen Literatur*, vol 1, Biblioteca Apostolica Vaticana, 1944, p. 273-276:

կարծիք է հայտնել Լևոն Խաչիկյանը⁶: Հարցը հետաքրքրել է նաև Նիկողայոս Մառնին, որն այդ կապակցությունը գրել է՝ «Տեսիլը ազգային սուրբին վերագրելը հեշտութեամբ կարող էր լինել, ի նկատի առնելով այն հանգամանքը, որ Հայոց Լուսաւորիչը, ըստ վարուց, ճիշտ որ տեսել էր Տեսիլք, թէպէտ այլ բովանդակութեամբ»⁷:

Վենետիկի Մխիթարյան Մատենադարանի ձեռագրացուցակում կազմողները «Գ Մաշտոց»-ի նկարագրության մեջ՝ Լուսավորչի տեսիլին վերաբերող հատվածում նշել են հետևյալը՝ «Ձեռագիրներէն ոմանց մէջ Տեսիլ եւս խորագրուած է: Անվաւեր գրուածիս ծագումը դեռ անորոշ կը մնայ, սակայն միջնադարեան ըլլալն ինչ ինչ բառերէն եւս բացատրութիւններէն իսկ յայտնի կը տեսնուի: Զայն ներկայացնող մեր Ձեռագրաց մէջ հնագոյնը կրնայ համարուիլ Մաշտոցս: Տեսիլս յերկրեալ է գլխաւորապէս Պօղոսի եւ Աստուածածնի Տեսլեանց վրայ. բայց անանունն իր կեղծիքը պարտակելու համար Յաճախապատումէն (ՓՆ. Ճառ, եր. 151 եւն) եւս փոխառութիւններ ըրած է. հետեւաբար է. դարէն շատ վերջը խմբագրուած ըլլալու է, Կայանագրացմէ յուղուած խնդրոյ առիթով մը: Կայանները (գէթ ստորինք) թէպէտեւ խաւարչուտ են եւ ի պատիժ մեղաց կարգեալ, բայց ըստ հեղինակին երկրիս վրայ կատարուած ողորմութեանց, աղօթից եւ պատարագաց ձեռքով վախճանեալ հոգիք կը զերծանին անտի եւ աստուածտեսութեան կը հասնին»⁸: Այս համառոտ դիտարկումը բարձրացրել է տեսիլի ծագման, խմբագրման ժամանակաշրջանի, դրանում արծարծվող դավանաբանական խնդիրների հարցերը և ակնարկել պատասխանները գտնելու բանալիներ: Այդ հարցերից յուրաքանչյուրը կարոտ է առանձին, համակողմանի ուսումնասիրության, որն անհնարին կլինի առանց համապատասխան գործիքակազմի առկայության: Իզուր չէ, որ որպէս հետազոտության առաջին քայլ, ձեռնարկել ենք համեմատական բնագրի հրատարակությունը:

Վիեննայի Մխիթարյան Մատենադարանի հայերեն ձեռագրերի ցուցակի Հ^մ 170 ձեռագրի նկարագրության մեջ Հակոբոս Տաշյանը տեսիլի բնագրի նկարագրությունից հետո ավելացրել է՝ «Հմմտ. ասորականը»⁹: Տաշյանը, փաստորեն,

⁶ Լ. Խաչիկյան, «Օտարալեզու հայ գրականությունը չորրորդ դարում (Ներսես Պարթևի և Եպիփանի նորահայտ «Հարցման» առիթով)», ՊՔՀ, № 3, 1973, էջ 35:

⁷ Ե. Մառ, Ամառային ուղևորութիւնից դէպ ի Հայս: Նկարագրութիւններ և քաղաքներ հայկական ձեռագրերից, Թարգմ. ՈՖ. Անտիբեան, Վիեննա, 1892, 67-82, էջ 68:

⁸ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, կազմեցին Հ. Բարսեղ եւ Հ. Գրիգոր Սարգիսեան, հ. Գ, Վենետիկ, Ս. Ղազար, 1966, էջ 67-68:

⁹ Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, հ. Ա, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1895, էջ 484:

ակնարկել է ասորերեն սկզբնագրի մասին, որից, հավանաբար, թարգմանվել է ուսումնասիրվելիք տեսիլը: Այլ տեղեկություններ այդ առեղծվածային բնագրի մասին, ցավոք, նա չի բերել¹⁰:

Ասորերենից թարգմանված լինելու հանգամանքը նշում է նաև Զարբհանալյանը: Նա անդրադարձել է այսպես կոչված «Անվաւեր» կամ «Անհատազատ» երկասիրություններին, որոնց թվում են նաև Սբ. Գրիգորի տեսիլը և Աստվածածնի պատմությունը: Զարբհանալյանը ընդգծել է, որ «անհատազատ» գրվածքներից շատերը «...մեծ հնութիւն պէտք է ունենան, կամ յառաջ քան զժամանակ Թանգմանչաց՝ և կամ անոնց դարուն պատկանելով», ապա հավելել, որ այդ գրությունները, որոնք, ամենայն հավանականութեամբ, թարգմանված են եղել ասորերենից, հետագայում ձեռքից ձեռք անցնելով և բազմիցս ընդօրինակվելով՝ հաճախ կորցրել են բնագրային նախնական առանձնահատկութիւնները: Զարբհանալյանը նաև կարծիք է հայտնել, որ նման երկասիրութիւնները տարածված էին քրիստոնեութեան Բ դարում գնոստիկյան աղանդավորների շրջանում, և հայերեն են թարգմանվել ասորերենից: Որպես վերջինի ապացույց՝ մեջբերել է հատված իր ձեռքի տակ եղած մի գրչագրից, որում թվարկված են հայ մատենագրութեան մեջ տեղ գտած «անվաւեր» գրքերի վերնագրեր՝ պնդելով հետևյալը՝ «Այս են անուանք ութևտասն սուտ գրոց որ եկեալ ի հերձուածող Ասորոց և ոչ յուղղափառաց Ասորոցն»: Թեև նշվել է տասնութ գիրք, սակայն ցանկում տեսնում ենք միայն տասնվեց վերնագիր՝ «Աղամայ կտակն, Ճիռն օրհնութեան, Փիփիանն, Գորտոսակն, Կիրակոսակն, Դոսիմովն, Պետրոսի տեսիլն, Դիաթիկն, Աստուածածնի պատմութիւնն, Սեբիոսն, Փիւռհոնացիքն, Մանկութեան աւետարանն, Մանեայ մեկնութիւն աւետարանի», ինչպես նաև ավելի ուշ թարգմանված՝ «Լուսաւորչի տեսիլն, Զանթաքչելի մատեանն և Գրիգորիսի և Բարսեղի հարցմունք»¹¹: Զարբհանալյանը, ցավոք, չի մանրամասնել, թե ո՞ր գրչագրի մասին է խոսքը: Այն հայտնաբերելու մեր փորձերը դեռևս հաջողութեան չեն հասել:

Զարբհանալյանի անվավեր գրերի ցանկին զուգահեռ պահպանվել է տասնվեց անուն նշող մեկ այլ ցանկ, որում հիշատակվում են միևնույն գրքերի անունները: Յանկը տեղ է գտել ՄՄ 1869 ձեռագրում (ԺՁ դ., թ. 391բ)՝ «Այս են անուանք ԺՁ սուտ գրոցն, որ եկեալ ի հերձուածող ասորոցն և ոչ ի յուղղափառ ասորոցն, իմանայք որ է այս՝ Աղամայ կտակն, Ճիռն աւրհնութեան, Փիփիեանն,

¹⁰ Տաշյանի ակնարկած ասորերեն բնագիրը գտնելու փորձով կապվեցինք Վիեննայի Մխիթարյան միաբանության հայրերի հետ՝ չնչին հույս ունենալով, որ միաբանությունում պահվում է ասորերեն մի ձեռագիր, որում տեղ է գտել ասորերեն տեսիլը կամ դրա գոյության մասին որևէ հիշատակություն, որին էլ ծանոթ լինելով հղում է կատարել ցուցակի հեղինակը: Սակայն որոնումները դրական արդյունք չտվեցին:

¹¹ Գ. Զարբհանալեան, Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց (Դ-ԺԳ), Վենետիկ, 1889, էջ 19-20:

Գորտոսական, Կիրակոսական, Ղոսիմոն, Պետրոսի տեսիլն, Գիաթեկն, Աստուածածնին պատմություն, Սեբիոսն, Փիլոհոնացիքն, Մանկություն տեառն, Լուսաւորչին տեսիլքն, Զանթագչելի մատեանսն, Գրիգորիսի և Բարսղի հրացմունք, զՄանեայ մեկնութիւն աւետարանի, և որ հաւատայ նոցա՝ նզովի»¹²:

Բարսեղ Սարգիսեանը համեմատել է եզր Մարգարեի հարցաքննությունը Լուսավորչի տեսիլի հետ՝ վերհանելով դրանց մերձավոր նմանությունները: Երկու տեսիլների մեզ հայտնի հնագույն ընդօրինակությունները տեղ են գտել Ս. Ղազարի ձեռագրատան 1208 թվականին գրված «Գ Մաշտոց»-ում¹³: Սարգիսեանը կարծիք է հայտնել, թե գուցե Սբ. Գրիգորի տեսիլը հայերենով գրված ստեղծագործություն չէ և ի սկզբանե վերագրված չի եղել Լուսավորչին. «...կարելի է ըսել, թէ Գր. ընծայուած Հարցաքննութեան սկզբնագիրն՝ ոչ հայերէն լեզուով գրուած էր և ոչ այլ Գրիգորի անունը կը կրէր իւր վերայ, այլ ասորի կամ պարսիկ լեզուով, և եզրի՝ կամ բոլորովին մի այլ մակագրութեամբ»¹⁴:

Այս փուլում դժվար է հստակ պնդել՝ արդյո՞ք Լուսավորչի տեսիլը թարգմանված է ասորերենից, ինչպես կարծիք են հայտնել վերոհիշյալ հեղինակները, թե՞ այն իսկապես ստեղծվել է հայկական միջավայրում, ինչպես ենթադրել են մյուսները, հատկապես, որովհետև մեզ չի հասել ասորերեն որևէ օրինակ¹⁵: Սակայն կան վկայություններ և նշաններ, որոնք ցույց են տալիս, որ, այնուամենայնիվ, ասորական բնագիր կարող էր գոյություն ունենալ: Այս հարցերը, սակայն, դուրս են սույն հոդվածի սահմաններից:

Մեզ հետաքրքրող տեսիլի մասին հիշատակություն չկա այնպիսի հետազոտողների ցանկերում, ինչպես Ֆարբիցիուսը¹⁶, Տիլոն¹⁷, Թիշենդորֆը¹⁸: Այն դուրս

¹² ՄՄ 708 (ժէ-ժԸ դդ.), 110բ-112ա՝ «Ի Փերոդ ամի տեառն Աբրահամո եկին յԱսորոց ի Հայս արբ ոմանք քաջաբանք և կամէին սերմանել զաղանդն Նեստորի և նզովեալ հալածեցին, բայց ոմանք ընկալան և նոնա քարմանեցին նոցա զուտ գիրս զայսոսիկ՝ զԳորդասակ, զԿիրակոսակ, զՊողոսի տեսիլն, զԱդամայ ապաշխարութիւն, զՏիադէկ մանկութիւն Տեառն և զ[Ս]եբիոս, և զՃիսն օրհնութեան, և զԱնթագչելի մատեանս, զԱւետարանի մեկնութիւն զՄանեա: Եւ որ հաւատա՝ նզովեալ լիցի, ամէն»: Հմմտ. ՄՄ 610 (ժԳ դ.), 57աբ:

¹³ Բ. Սարգիսեան, Ուսումնասիրությունք Հին կտակարանի անվաւեր գրոց վրայ, Վենետիկ, 1898, էջ 452:

¹⁴ Նույն տեղում, էջ 473:

¹⁵ Մեզ հայտնի ասորական ձեռագրերի հավաքածուներում չկա որևէ հիշատակություն ասորերենով գրված մի բնագրի մասին, որը համապատասխաներ տեսիլի հայերեն տեխստին: Այս փաստը, իհարկե, չի բացառում, որ այդպիսին գոյություն ունեցել է կամ ունի, և գուցե թափնված է մեզ անհայտ որևէ ձեռագրի էջերում:

¹⁶ Johann Albert Fabricius, *Codex apocryphus Novi Testamenti*, vol. 1., Hamburg, 1743.

¹⁷ Johann Karl Thilo, *Codex apocryphus Novi Testamenti*, vol. 1, Leipzig, 1832.

¹⁸ Constantin von Tischendorf, *Evangelia apocrypha*, Lipsiae, Avenarius et Mendelssohn, 1853.

է մնացել նաև ինչպես միջնադարյան հեղինակների, այնպես էլ նորօրյա ուսումնասիրողների կազմած՝ Ն. Էմինի պարականոնների,¹⁹ Սամուել Անեցու հայտնի ժամանակագրության սուտ գրերի,²⁰ Կիրակոս Գանձակեցու «Պատմութիւն Հայոց»-ի ցանկերից²¹: Բացակայում է նաև Սարգիս Շնորհալու աշխատությունից²² և Վենետիկի Միսիթարյանների հրատարակած անկանոն գրքերի շարքերից²³:

Տեսիլին անդրադարձել է Անասյանը «Հայկական մատենագրություն» գրքի «Անկանոն կամ Անվավեր գրքեր» բաժնում: Անասյանն անհամաձայնություն է հայտնել տեսիլն անկանոնների շարքին դասելու գաղափարին՝ պատճառաբանելով, որ թեև այն բովանդակությամբ Աստվածաշնչյան շրջանակին չի պատկանում, բայց այդպիսին է հայ մատենագրության գրեթե հիսուն տոկոսը, և ճիշտ չի լինի պարականոն տերմինը տարածել բոլորի վրա²⁴:

Սբ. Գրիգորի և Աստվածածնի տեսիլները հիշատակվում են Հայ աստվածաբան, պատմագիր, մանկավարժ Վանական Վարդապետ Տավուշեցու (1181-1251 թթ.) «Գիրք Հարցմանց»-ի «անընդունելի» գրքերի շարքում²⁵:

Լուսավորչի տեսիլի բնագիրը հատվածաբար հրատարակվել է մի քանի աշխատանություններում: Դրանց թվում է Բարսեղ Սարգիսեանի վերոնշյալ աշխատությունը: 2018 թվականին Մայքլ Սթոունը հրատարակել է տեսիլի մի ամբողջական բնագիր՝ անգլերեն թարգմանության ուղեկցությամբ: Հոդվածը ներառում է եղմ. 1293 ձեռագրի (ԺԴ դար) 269բ-279բ էջերին տեղ գտած բնագրի

¹⁹ Н. О. Эмин, “Список армянских апокрифов, составленный по каталогу рукописей Эчмиадзинской Библиотеки, изданному в 1863 году в Тифлисе”, *Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе (за 1859-1882 гг.): апокрифы, жития, слова и др.*, Москва, 1897, с. 339-344.

²⁰ Սամուել Անեցի, Հաւաքմունք ի գրոց պատմագրաց յաղագս գիւտի ժամանակաց անցելոց մինչեւ ի ներկայս ծայրաքաղ արարեալ, աշխ.՝ Ա. Հայրապետեանի, Կ. Մաթեոսեանի, խմբ.՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երևան, 2011, էջ 95:

²¹ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ.՝ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 51:

²² Սարգիս Շնորհալի, Մեկնութիւն եօթանց թղթոց կաթողիկեայց, Կոստանդինուպօլիս, 1826, էջ 398-399:

²³ Թանգարան հին և նոր նախնեաց, հ. Ա, Անկանոն գիրք Հին Կտակարանաց, կազմ. Ս. Յովսեփեան, Վենետիկ, 1896: Նաև՝ Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, հ. Բ, Անկանոն գիրք նոր Կտակարանաց, կազմ. Ե. Տայեցի, Վենետիկ, 1898: Նաև՝ Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, հտ. Գ, Անկանոն գիրք Առաքելականք, կազմ. Ք. Ջրաքեան, Վենետիկ, 1904:

²⁴ Հ. Անասյան, Հայկական մատենագրություն, Ե-ժԼ դդ., հ. Ա, Երևան, 1959, էջ 908:

²⁵ Մ. Մամյան, «Վանկոպյան աւետարան»-ը՝ հայ միջնադարյան արգելված գրերի ցանկերում», *ԲՄ* № 25, 2018 (էջ 166-186), էջ 182-183:

Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Դ, կազմ. Ն. արք. Պողոսեան, Երուսաղեմ, 1969, էջ 484:

տեքստը, որն ուղեկցվում է բնագրի ծագման շուրջ համառոտ ուսումնասիրությունում²⁶: Տեսիլի ամփոփ խմբագրություններ պահպանվել են հայսմավուրքների ինչպես ձեռագիր, այնպես էլ տպագիր օրինակներում²⁷:

Որոշ հետազոտողների ուշադրությունը գրավել է տեսիլում տեղ գտած հոգու և մարմնի միջև երկխոսության հատվածը: Դրան անդրադարձել է Ն. Մառը՝ նա հատվածը թարգմանել և հրատարակել է ռուսերեն²⁸, ինչպես նաև քննություն է ենթարկել հոգու ու մարմնի վեճի ազդեցությունը հետագա հեղինակների աշխատանքների վրա²⁹:

Աելիտա Դոլուխանյանն ուսումնասիրել է տեսիլի ընդհանուր դրույթները՝ շոշափելով դրա փրկիսոփայական և մարդաբանական կողմերը: Նա փորձել է գտնել նման մտածողության արմատները (հատկապես մարմնի և հոգու միջև վեճը կամ երկխոսությունը) հեթանոսական ժամանակի, Հին եգիպտական, պարսկական, ասորաբաբելական, բյուզանդական և հին սլավոնական աղբյուրներում, հնդկական ժողովրդական երգերում և ցույց տալ, որ նմանատիպ փրկիսոփայական հարցեր կամ անհանգստություններ բարձրաձայնվել են նաև նախկինում: Ըստ Դոլուխանյանի՝ Լուսավորչի տեսիլը լայն տարածում է գտել միջնադարյան հայ գրականության մեջ: Դրանից ազդվելով ստեղծագործել են մասնավորապես Խաչատուր Կեչառեցին, Գրիգորիս Աղթամարցին, Բուղաղ օղլի Լազի խանը, Ղուկիանոս Կարնեցին և այլն³⁰:

Հոգու և մարմնի երկխոսությունը ռուս բանասեր Ֆյոդոր Բատյուշկովի մենագրության հիմնական հետազոտության առարկան է: Գրքում համակողմանի և մանրամասն քննություն է ենթարկվել նաև Լուսավորչի տեսիլում տեղ գտած վեճը³¹:

Ասատուր Մնացականյանը հպանցիկ անդրադարձել է Լուսավորչի տեսիլին՝

²⁶ Michael Stone, “The Armenian Questions of St. Gregory. A Text Descended from 4 Ezra: Edition of Recension I,” *Le Muséon* 131 (1-2), 2018, pp. 141-172.

²⁷ Ձեռագիր օրինակների համար տե՛ս ՄՄ 1511 (էջ 323ա), ՄՄ 1533 (190բ): Տպագիր օրինակների համար տե՛ս Քաղոցի ԺԱ, Գեկտեմբերի ԺԹ հետևյալ հրատարակություններում՝ *Յալսմաւուրք*, Կ. Պոլիս, ի տպարանի Գրիգոր Մարզվանեցու, 1730: *Յալսմաւուրք*, Կ. պոլիս, ի տպարանի Գրիգոր Մարզվանեցու, 1706: *Յալսմաւուրք*, Կ. Պոլիս, ի տպարանի Աստվածատուր Կոստանդնուպոլսեցու, 1706-1708:

²⁸ Н. Марр. «Из летней поездки в Армению. Заметки и извлечения из армянских рукописей X— XVI», *Записки Восточного Отделения Императорского Русского Археологического Общества*, том VI, Санкт-Петербург, 1891-92 (с. 135-228), с. 159-175.

²⁹ Ն. Մառ, *Ամառային ուղեորությունից դէպ ի Հալս...*, էջ 67-82:

³⁰ Ա. Դոլուխանյան, «Գրիգոր Լուսավորչի տեսիլի օտար աղերսները», *ԼՀԳ*, № 9, 1984, էջ 53-58:

³¹ Ф. Батюшков, *Спор души с телом в памятниках средневековой литературы. Опыт историко-сравнительного исследования*, Санкт-Петербург, 1891, с. 193-207.

այն համարելով ժ-ժԴ դարերում հակաթոնդրակյան պայքարի հետևանքով ստեղծված գրություններից մեկը³²:

Ակնհայտ է, որ տեսիլը մեծ տարածում է ունեցել միջնադարում և բազմիցս ընդօրինակվել: Այն պահպանվել է նաև վրացերեն թարգմանությունում: Այս մասին հիշատակել է դեռևս Նիկողայոս Մառը՝ հղում անելով 1891 թվականի վրաց «Իվերիա» լրագրի 118 համարին³³:

Լուսավորչի տեսիլի վրացական աղբյուրներին անդրադարձել է վրացի բանասեր, պատմաբան Ալեքսանդր Խախանովը ժողովրդական էպոսի և պարականոնների ուսումնասիրությանը վերաբերող գրքում: Աշխատության մեջ առանձնացված է մի ենթագլուխ՝ նվիրված Սբ. Գրիգորի զրույցին հրեշտակի հետ, որտեղ նա գետեղել է տեսիլի հատվածական ուսերեն թարգմանություններ՝ ժԹ դարի մի ձեռագրի հիման վրա, անդրադարձել նաև հոգու և մարմնի միջև երկխոսությունը³⁴:

Վրացի բանասեր, գրականագետ Կոռնելի Կեկելիձեն «Վրաց հին գրականության պատմություն» գրքի առաջին հատորում առանձնացրել է պարականոններին վերաբերող մի բաժին: Դրանում հիշատակվում է վրացերենով գոյություն ունեցող պարականոնների մի ժողովածու, որ հայտնի է «Մարգարիտ» (ՅՆՐՅՁԼՈՇՕ) անունով և պահպանվել է մի շարք ձեռագրերում: Ամենավաղը՝ ժԼ դարի է, սակայն դրանում տեղ գտած առանձին տեսիլներն ու պատմությունները, անշուշտ, առավել վաղեմություն ունեն: Դրանց շարքում յոթներորդը Գրիգոր Լուսավորչի և հրեշտակի միջև հարց ու պատասխանի պատմությունն է: Կեկելիձեն հստակորեն նշել է, որ պատմությունը Հայաստանի Գրիգոր Լուսավորչի մասին է³⁵:

2009 թվականին լույս տեսած «Հին վրացական գրականության թարգմանված երկեր» ծանրակշիռ աշխատության Գ հատորում էնրիկո Գաբիձաշվիլին տեղեկություններ է տալիս վրացերեն թարգմանված բնագրերի մասին՝ մանրամասն անդրադառնալով պարականոն գրվածքներին: Գիրքը ներառում է յուրաքանչյուր բնագրի հետ կապված ամփոփ տեղեկություններ, ձեռագրերի ցանկեր, հրատարակությունների հղումներ: Գրքում անդրադարձ կա Լուսավորչի տեսիլին, մեջբերվում են ձեռագրային տվյալներ և նշվում է, որ թարգմանված

³² Աս. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, Երևան, 1956, էջ 620-621:

³³ Ն. Մառ, Ամառային ուղեորությունից դեպի Հայաստան..., էջ 68:

³⁴ А. Х. Хаханов, Очерки по истории грузинской словесности, Москва, 1895, с. 222-226.

³⁵ ՅՈՐՆԵՂՈ ՅՅՅԵԼՈԺԵ [Կոռնելի Կեկելիձե], Ժველი ქართული ლიტერატურის ისტორია [Վրաց հին գրականության պատմություն], հ. Ա, Թբիլիսի, 1980, էջ 451-453:

է հայերենից³⁶: Այսպիսով, կարելի է լուծված համարել վրացերենով պահպանված Սբ. Գրիգորի տեսիլի սկզբնաղբյուրի հարցը: Այն, հավանորեն, թարգմանվել է հայերեն մի օրինակից և ապա անցել ինքնուրույն զարգացման և խմբագրման ճանապարհ:

Հետաքրքրական է նաև, որ եղմ. 3681 ձեռագրի (ԺԸ դար) 287-315 էջերին տեղ է գտել Լուսավորչի տեսիլի հայատառ օսմաներեն մի թարգմանություն (գրիչ՝ Կարապետ Աբղ. Յամթեցի): Այս եզակի թարգմանությունը ևս խոսում է տեսիլի տարածվածության և ժամանակին ունեցած կարևորության մասին³⁷:

Տեսիլն իր արտացոլումն է գտել նաև հայ մանրանկարչության մեջ: ԺԸ դարում էջմիածնում գրված ՄՄ 1533 Հայսմավուրքի 190բ-191ա էջերին տեղ է գտել Լուսավորչի տեսիլի մի համառոտ խմբագրություն: Ձեռագիրը հագեցած է մանրանկարներով, դրանց թվում է Լուսավորչի և հրեշտակի գրույցի պատկերը 190բ էջի ձախակողմյան լուսանցքում՝ անմիջապես բնագրի սկզբում: Գրիգոր Լուսավորիչը պատկերված է երկու ձեռքերն իրենից դեպի ձախ ուղղած՝ կարծես ուղղորդելով ընթերցողի ուշադրությունը դեպի տեքստը: Նույն ուղղությամբ են պատկերված նաև հրեշտակի ձեռքերը: Գրիգոր Լուսավորիչը երկնագույն պարեգոտով է, որի վրայից կրում է մանուշակագույն փիլոն և խաչազարդ ուրար, գլուխն էլ ծածկում են երկնագույն խուլյրն ու լուսապսակը: Գունային հակադրության մեջ է ոսկեգօծ լուսապսակով հրեշտակի կերպարը՝ կարմրագույն թևերով, շագանակագույն շապիկով:


Մեզ է հասել Լուսավորչի տեսիլի ընդօրինակությամբ հարյուրից ավելի ձեռագիր, որ պահվում են Մաշտոցյան Մատենադարանում, Վենետիկի և Վիեննայի Մխիթարյան Միաբանություններում, Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքում և ուրիշ մեծ ու փոքր ձեռագրատներում, վանքերում ու պահոցներում:

Ձեռագրերի մեծ մասը ԺԷ դարի է, իսկ ամենավաղ ընդօրինակությունները ԺԳ դարի են³⁸: Այնուամենայնիվ հավանական է, որ տեսիլը ստեղծվել է ավելի վաղ, քան վկայում են պահպանված նմուշները: Մեր կազմած ինստունհինգ ձեռագրի համեմատական աղյուսակում երևում է, թե որ դարաշրջանից քանի ձեռագիր է մեզ հասել: Սակայն անհրաժեշտ է զգուշավոր լինել և տարածվածության այս ցուցանիշները դիտարկել հայկական ձեռագրային ավանդույթի ողջ համատեքստում՝ հաշվի առնելով տարբեր ժամանակաշրջաններում գրչության զարթոնքի և անկման առանձնահատկությունները:

³⁶ **ენბრძოვ გაბობაშვილი [Էնրիկո Գաբիձաշվիլի]**, *ძველი ქართული მწერლობის ნათარგმნი ძეგლები. ბიბლიოლოგია, ეგზეტიკა, აპოკრიფები* [Հին վրացական գրականության թարգմանված երկերը], հտ. Գ, Քբիլխի, 2009, էջ 402-403:

³⁷ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. ԺԱ, կազմ. Ն. աբ. **Պողարեան**, Երուսաղեմ, 1991, էջ 112:

³⁸ Ձեռագրերի ընդօրինակման ժամանակը բերվել է ըստ ձեռագրացուցակների տվյալների:



Համեմատելով շորս տասնյակից ավելի ձեռագիր՝ առանձնացրել ենք տեսիլի մի քանի խմբագրություն, որոնք իրարից տարբերվում են բովանդակությամբ, շարադրանքով, մասերի հերթականությամբ և արձարժվող հարցերով: Ստորև հրատարակում ենք տեսիլի Ա խմբագրության բնագիրը: Առաջին անգամ կազմելով տեսիլի համեմատական բնագիրը՝ հիմք ենք ընդունել մեզ հասած ամենահին և համեմատաբար ամբողջական օրինակը՝ Վնտկ. 570: Համեմատության համար ընտրվել են հետևյալ ձեռագրերը՝

A = Վնտկ. 322 (ձեռ. թիւ 570), 1208 թ., 179ա-190բ,

B = ՄՄ 2546, ԺԴ դ., 313ա-21ա,

C = ՄՄ 1475, 1539 թ., 94ա-100բ,

D = ՄՄ 655, 1655 թ., 343ա-355,

E = ՄՄ 2004, ԺԶ դ., 149բ-162բ:

Այս խմբագրությանն են համապատասխանում նաև եղմ. 1293 (ԺԴ դ.) ձեռագրի տեքստը, ինչպես նաև ՄՄ 2576 (ԺԶ դ., 136բ-8բ) և ՄՄ 3206 (ԺԶ դ., 49ա-53ա) ձեռագրերում տեղ գտած բնագրերը: Խմբի ձեռագրերը բովանդակային առումով կրկնում են իրար, թեև տարբերությունները բազմաթիվ են: Տեսիլի բնագիրը տրոհել ենք առանձին մի քանի հատվածի՝

- մուտք
- մեղավորի հոգու և մարմնի վեճ
- մեղավորի հոգուն սպասվող աստիճաններ
- աղոթք, պատարագ, ողորմություն, պահք, խոստովանություն, ապաշխարություն, մեղք և հարակից հարցեր

- արդարի հոգու և մարմնի երկխոսություն
- արդարի հոգուն սպասվող աստիճաններ
- աստվածության ավտոն, երկինքների, հրեշտակների դասերի նկարագրություններ:

A և *E* տառանիշերով հիշատակված ձեռագրերն առանձնանում են սերտ նմանությամբ, ունեն նույն շարադրանքն ու կառուցվածքը: Մինչդեռ *B*, *C* և *D* բնագրերում դրվագների հաջորդականությունը խախտված է: Դրանցում չկա աղոթքի, պահքի, մեղքի, խոստովանության շուրջ հարցուպատասխանը: *D* ձեռագրի բնագիրը զատվում է շարքից իր վերջավորությամբ, որը ներկայացրել ենք առանձին՝ զետեղելով ամենավերջում:

Եղմ. 1293 ձեռագրի բնագիրը կրկնում է հիմք ձեռագրի բովանդակությունը, թեև որոշակի տարբերումներով: Ձեռագրի տպագրված տեքստի 39-րդ պարբերության շարունակությունը հոգու և մարմնի վեճն է, և հենց այստեղ է նկատվում հիմնական տարբերությունը: Այսպիսով Երուսաղեմի ձեռագրում հիմք ձեռագրի համեմատությամբ բացակայում է նույն հատվածը, որը չկա նաև *B*, *C* և *D* ձեռագրերում: Վերջին պնդումը ճիշտ է նաև ՄՄ 3206 ձեռագրի պարագայում:

ՄՄ 2576 ձեռագրի բնագիրը հագեցած է հապավումներով և անփույթ ընդօրինակություն է: Այն մոտ է *B*, *C* և *D* բնագրերին, սակայն պահքի, ապաշխարության վերաբերյալ քննարկումների կեսից տեքստն ընդհատվում է, և հետևում է այլ շարադրանք:

ՄՄ 2576, ՄՄ 655, *B* և *C* ձեռագրերում «եւ»-ը հանդես է գալիս «և» ձևով: Իսկ ՄՄ 2576 և ՄՄ 1475 ձեռագրում «աւ»-ը երբեմն փոխարինված է «օ» տառով: Վերջինիս կիրառությունը նկատվում է նաև ՄՄ 2004 ձեռագրում, որում չկա «եւ» կցագրի գործածություն, այլ ամենուր գրված է «և»: Այս առանձնատիպություններն ավելորդ ենք համարել տարբերակել տարբերումներում:

Բնագիրը կազմելիս հաշվի ենք առել *E* ձեռագրի գրչի ուղղումները: Այս ձեռագիրն անփույթ ընդօրինակություն է, որոշ հատվածներ բաց են թողնված, իսկ առանձին կապակցություններ կամ բառեր կրկնակի են բերվում:

Բնագիրը տրոհել ենք հայերենի կետադրության ժամանակակից կանոններին համապատասխան՝ պահպանելով գրաբարի ուղղագրության կանոնները:

ԲՆԱԳԻՐ

Հարցաֆննությին¹ սրբոյն² Գրիգորի Հայոց³ Լուսաւորչին, զոր եհարց⁴ գհրեշտակն⁵ Տեառն⁶ մինչ էր յայրին Մանեա⁷:

Յատուր⁸ միում⁹ շրջէր յանապատին¹⁰ սուրբն Գրիգորիոս¹¹ եւ¹² յանկարծակի զմտաւ ածեալ, եթէ¹³ զինչ են¹⁴ հոգիք մարդկան եւ¹⁵ ուր երթան¹⁶: Եւ¹⁷ ապա զֆատասուն տիւ եւ զֆատասուն¹⁸ գիշեր հաց¹⁹ ոչ եկեր²⁰ եւ ջուր ոչ արբ²¹, եւ ոչ դադարեաց ի լալոյ, եւ անկեալ ի վերայ երեսաց իւրոց²² եւ ասէ²³. «Ո՛վ²⁴ Տէր բարերար²⁵, առաքեա առ իս զհրեշտակ քո²⁶, որ եկեալ²⁷ ցուցանէ²⁸ ինձ յաղագս²⁹ հոգոց³⁰ արդարոց եւ մեղատուրաց³¹, եթէ³² ուր երթան³³ յորժամ ելանեն³⁴ ի մարմնոյն³⁵ եւ կամ որպէ՛ս³⁶ հանգչին³⁷:

Եւ³⁸ առաքեաց Տէր զհրեշտակ³⁹ իւր առ նա⁴⁰ եւ ասէ՛ «Զինչ խնդրես⁴¹, զի⁴² կատարեցից⁴³»:

1 BCD պատմութիւն

2 B սրբոյ

3 B չիք

4 C + ընդ D չիք E էհարց

5 BE հրեշտակն C հրեշտակին D հրեշտակէն + ընկալաւ

6 C Աստուծոյ

7 B չիք B + վասն հոգոց մարդկան աւգնեա տէր Յիսուս Քրիստոս CE մանեալ D չիք տեառն մինչ էր յայրին մանեա

8 D ատուր

9 BC + յորժամ D + յորում

10 B յանապատ D յանապատի

11 D Գրիգոր

12 B չիք

13 BCD զմտաւ էած (D ած) թէ քիս զմտաւ ածեալ եթէ

14 BD լինիցին C լինին

15 BD + կամ C կամ

16 D + յորժամ ելանեն ի մարմնոյն

17 B չիք

18 A զիս ... զիս D ֆատասուն... ֆատասուն

19 BCD չիք

20 E էկեր

21 BCD էարբ քիս ջուր ոչ արբ

22 BCD չիք եւ անկեալ ի վերայ երեսաց իւրոց

23 B ասելով քիս եւ ասէ CE ասէր C + այսպէս

24 B չիք

25 C բարերար տէր քիս տէր բարերար

26 B զհրեշտակ քո առ իս քիս առ իս զհրեշտակ քո

27 BCD չիք

28 BD ծանուցանէ C պատմեցէ

29 B վասն

30 BC + մարդկան

31 C մարդկան քիս արդարոց եւ մեղատուրաց D մեղատուրեաց

32 BCD թէ

33 E երթալ

34 D ելանել

35 E մարմնոյն

36 D ուր

37 ABE հանկչին

38 B չիք BD + ապալ

39 DE զհրեշտակն

40 BCD սուրբն գրիգոր (B սուրբ գրիգորիոս) քիս նա

41 BCD խնդիր + է քո C + ունիս

42 D ֆանգի

43 E չիք եւ ասէ զինչ խնդրես զի կատարեցից

44 Ասէ⁴⁵ սուրբն Գրիգոր⁴⁶. «Ո՞վ ես դու»:

47 Ասէ հրեշտակն. «Հոգեղէն⁴⁸ եմ ես եւ⁴⁹ հրեշտակ եմ անտեսանելի⁵⁰»:

Ասէ սուրբն Գրիգորիոս⁵¹. «Արդ, որովհետեւ առաքեցար առ իս, ծանո⁵² ինձ վասն հոգոց մարդկան, թէ զի՞նչ լինին⁵³»:

Ասէ հրեշտակն. «Զի՞նչ ասեմ⁵⁴, զի կարի չար է⁵⁵ մահ մեղատրին: ⁵⁶Յորժամ ելանէ⁵⁷ հոգի մեղատրին⁵⁸, ապա իմանայ գտելի⁵⁹ տանջանացն⁶⁰ գեհեներին⁶¹ եւ զխաւարն աղշամաղջին⁶², որ կայ եւ⁶³ պահի նմա»:

Յայնժամ տրամեցաւ սուրբն Գրիգորիոս⁶⁴ եւ ասէ⁶⁵. «Եթէ այդ⁶⁶ այդպէս է, ապա⁶⁷ երանի է⁶⁸ շեղելոցն, որոյ ոչ⁶⁹ ելին⁷⁰ յորովայնէ⁷¹, եւ⁷² ոչ ունին յարութիւն, եւ ակն գեհեներին⁷³: Զի⁷⁴ առաքելոցն⁷⁵ պսակ է խոստացեալ որ⁷⁶ քաղաքացեացն եւ⁷⁷ սղոցեացն⁷⁸, եւ մեք, որ այնպէս⁷⁹ ոչ կարեմք⁸⁰ չարչարել⁸¹, զի՞նչ լինիցի մեզ⁸²»:

Ասէ հրեշտակն⁸³. «Հարցեր⁸⁴ եւ ասացի⁸⁵ քեզ զպատասխանին⁸⁶»:

44 DE + եւ

45 B պատասխանի ետ *փիւ սսէ*

46 B + և ասէ D գրիգորիոս + ցհրեշտակն

47 D + եւ

48 B հրեղէնն *փիւ* հրեշտակն հոգեղէն D *չիք*

49 BD ես եմ *փիւ* եմ ես եւ

50 C *չիք* ասէ սուրբն գրիգոր ով ես դու ... անտեսանելի BD *չիք* եմ անտեսանելի + տեառն

51 BCDE գրիգոր C + ցհրեշտակն

52 C պատմեալ *փիւ* արդ որովհետեւ առաքեցար առ իս ծանո

53 BD լինիցին C + և կամ որպէս հանգչին

54 D *չիք* զինչ ասեմ

55 C + և դժնդակ

56 D + և

57 B ելանիցէ

58 B + և

59 D տեղի

60 BCD տանջանաց AE + եւ

61 D գեհեներոյն E զգեհեներին

62 B աղշամաղջին D զխաւար աղշամաղջին *փիւ* զխաւարն աղշամաղջին

63 E *չիք*

64 BCD գրիգոր

65 BD + զինչ է բանդ այդ

66 B ապա թէ *փիւ էթէ* այդ

67 D իցէ *փիւ* է ապա

68 B *չիք*

69 A + եւ E չեն

70 AE լեալ

71 BCD որք ոչ ելին յորովայնէ (D ելնեն յորովայնէ) *փիւ* որոյ ոչ ելին յորովայնէ BCD + մաւր իւրեանց

72 B որք D *չիք*

73 BC գեհեներոյն D ոչ կեանք հեհեներոյ *փիւ* ակն գեհեներին

74 D եւ

75 C + և մարտիրոսացըն

76 D որ

77 D *չիք*

78 C + և զարիւնս իւրեանց հեղին

79 B այնչափ D այդչափ

80 C կարացաք

81 ADE չարչարիլ

82 B լինիցիմք *փիւ* լինիցի մեզ

83 BD պատասխանի ետ հրեշտակն (B հրեշտակ) և ասէ *փիւ սսէ* հրեշտակն

84 BE հարց E + անէր

85 BC եւ ես տամ (C արարի) *փիւ* եւ ասացի E ասէր D խարարից *փիւ* հարցեր եւ ասացի

86 BCD պատասխանի

Ասէ սուրբն Գրիգոր⁸⁷ ցհրեշտակն⁸⁸. «Դո՛ւ միայն⁸⁹ առնուս⁹⁰ զհոգին⁹¹, եթէ այլ հրեշտակի⁹² գան ընդ քեզ⁹³»:

Հրեշտակ⁹⁴. «Յորժամ արդարն վախճանի⁹⁵, ոչ մի գայ կամ երկուս⁹⁶, այլ գունդի⁹⁷ բազումի⁹⁸ եւ մեծաւ⁹⁹ ուրախութեամբ տանին¹⁰⁰: Բայց առ մեղաւորն մի գայ¹⁰¹ կամ երկուս¹⁰², եւ այն ոչ կամաւ¹⁰³, այլ ի հարկէ¹⁰⁴ հրամանին¹⁰⁵ Աստուծոյ»:

¹⁰⁶Գրիգոր¹⁰⁷. «Յորժամ առնոյի¹⁰⁸ զհոգի¹⁰⁹ մարդոյն¹¹⁰, ո՛ւր տանիիք»:

Հրեշտակ¹¹¹. «Յորժամ առնում¹¹² զհոգի մեղաւորին, դատախազ¹¹³ լինի¹¹⁴ հոգին ընդ մարմինն¹¹⁵ եւ ասէ. «Զի՞նչ գործեցեր, ո՛վ մարմին, յափտենական հրոյն¹¹⁶ արարեր կերակուր¹¹⁷ եւ ոչ գիտացեր զայս որոշումնս¹¹⁸: Այսպէս թուէր քեզ, եթէ¹¹⁹ յափտենական ես¹²⁰ եւ ոչ¹²¹ մեկնելոց յինէն¹²²»:

Պատասխանի տայ մարմինն¹²³ եւ ասէ. «Մի այդչափ մեծաբանես¹²⁴ եւ

87 D գրիգորիոս

88 C չիք BD ցհրեշտակ

89 C մի միայն հրեշտակի *փիս* դու միայն

90 C առնու D ունիս

91 C + ի մարմնոցն D զհոգիսն

92 B թէ այլի *փիս* եթէ այլ հրեշտակի

93 C բազումի *փիս* այլ հրեշտակի գան ընդ քեզ BCD + ասէ

94 C հրեշտակըն DE հրեշտակն E + ասէ

95 BC արդար վաղնանի (C լինի վախճանական) *փիս* արդարն վախճանի

96 BD երկու + հրեշտակի (D հրեշտակ) գան C ոչ թէ մի կամ երկու հրեշտակ գա առ նա *փիս* ոչ մի գայ կամ երկուս

97 B գուղի C գունդ

98 ABCE բազում

99 B չիք E մեծատուրացն

100 C + զհոգի արդարոյն

101 B չիք C գան

102 BD երկու

103 C ոչ իւրեանց կամաւ գան *փիս* այն ոչ կամաւ

104 C + անեղ և մեծ

105 D հրամանացն

106 BCD + ասէ սուրբն

107 DE գրիգորիոս E + ասէ BCD + և

108 BCD առնում

109 D զհոգին

110 B չիք զհոգի մարդոյն C մեղաւորին D մարդոյ

111 BCDE (BCD + ասէ) հրեշտակն (E + ասէ) *փիս* հրեշտակ

112 BCD առնում

113 ACE դատախազի D դատայխազ

114 ACE չիք

115 D մարմնոյն

116 DE հրուն

117 C կերակուր արարեր զիս *փիս* արարեր կերակուր

118 B գորոշումս *փիս* զայս որոշումնս C չիք եւ ոչ գիտացեր զայս որոշումնս D որոշումս

119 BCD թէ

120 BCD էիր C + յաշխարհի

121 D + էիր E + ես

122 B չիք եւ ոչ մեկնելոց յինէն CD մեկնելոց (D մեռանելոց) *փիս* մեկնելոց յինէն

123 C մարմինն առ հոգին խասաի *փիս* պատասխանի տայ մարմինն

124 B մեծաբանիր C մեծաբաներ D մեծայբաներ E մեծայբանես

ինձ մեղադրես¹²⁵, զի յամենայն¹²⁶ շարիս դու յորդորէիր¹²⁷, եւ ես զգործսն¹²⁸ կատարէի¹²⁹, եւ յորժամ ցանկութեամբ¹³⁰ բորբոքէիր¹³¹, ոչ արկանէիր¹³² զջուրն¹³³ եւ¹³⁴ շիջուցանէիր զհուրն¹³⁵»:

Ասէ հոգին. «Ես ցանկայի¹³⁶ միայն, բայց¹³⁷ դու զգործսն¹³⁸ կատարէիր՝ յուտել¹³⁹, յըմպել¹⁴⁰, ի շնալ, պոռնկել¹⁴¹, յագահել, յափշտակել¹⁴², ո՛չ յիշէիր զահեղ¹⁴³ դատաստանն¹⁴⁴ Աստուծոյ»:

Պատասխանի տայ¹⁴⁵ մարմինն եւ ասէ¹⁴⁶. «Ինձ զի¹⁴⁷ մեղադիր լինիս, զի¹⁴⁸ քո տանար էի¹⁴⁹ եւ բնակարան, որպէս փողն¹⁵⁰ ի ձեռն¹⁵¹ արուեստականի¹⁵², կամ որպէս երեսանակ¹⁵³ ձիոյ¹⁵⁴, զի որպէս¹⁵⁵ կամի¹⁵⁶, այնպէս¹⁵⁷ վարի¹⁵⁸»:

Ասէ հոգին. «Ես քեզ յաւժարանայի¹⁵⁹ յամենայն¹⁶⁰ շարիս»:

Ասէ մարմինն¹⁶¹. «Արդ, եւ¹⁶² դու մի վրիպիր¹⁶³, զի պոռնկութիւն¹⁶⁴

125 BCD մեղադիր (D մեղադիր) + լինիր (C լինիս)

126 DE ամենայն

127 BD յաւժարէիր C յառաջ յաւժարէիր և ցանկայիր խորհրդով և բանիս *ի/ս* յորդորէիր E յորդորէին

128 BE զգործն C գործով D գործսն

129 E կատարէին

130 D ցանկութիւն

131 BC բորբոքէիր

132 D անկանէիր

133 ABE ջուր

134 D *չ/ք*

135 B + այլ առաւել բորբոքէիր զցանգութիւն D + այլ առաւել բորբոքէիր զհուրն մեղաց C + յինէն

136 A ցանկայ D ցանկութիւն E ցանկանայի

137 C և D բաց

138 C զչար գործսն *ի/ս* զգործսն D + միայն E զգործն

139 D ոտել

140 AB յըմբել D ըմպել

141 AB պոռնկիլ D պոռնիկել և *ի/ս* ի շնալ պոռնկել E պորնիկիլ

142 A յափշտակել BD ի յափշտակել և ի յագահել *ի/ս* յագահել յափշտակել C ի յագել ի գողանալ ի սպանանել *ի/ս* յա-

գահել յափշտակել և D յափշտակել յագահել և *ի/ս* յագահել յափշտակել

143 C + և զանաչառ

144 B յիշեցեր զդատաստանն *ի/ս* յիշէիր զահեղ դատաստանն D դատաստան

145 B ես

146 D ասէ մարմինն *ի/ս* պատասխանի տայ մարմինն և ասէ

147 B մի C ընդէր

148 C ես B լինիր ես *ի/ս* լինիս զի D մեղադիր լինիս ես *ի/ս* մեղադիր լինիս զի

149 E ի

150 B պղինձ D փող

151 B ձեռս C ձեռին

152 B արուեստատրի + և CD արուեստատրի

153 B երեսանակ DE երեսական

154 E ձիս

155 B որպէ C ընդ որ *ի/ս* որպէս

156 C կամեսցի D կամիր E վամինն

157 C ընդ այն *ի/ս* այնպէս E այն

158 C ուղեացէ D վայրիր

159 BCD յաւժարէի E յաւժարանայ

160 E ամենայն C + մեղս և ի

161 D մարմին

162 BCD և արդ *ի/ս* արդ եւ

163 C պարծիր D վիրապէիր *ի/ս* մի վրիպիր

164 D պոռնիկութիւն E պոռնկութեան

մարմնոյն¹⁶⁵ եւ նախանձ¹⁶⁶, հակառակութիւն¹⁶⁷ եւ սնապարծութիւն¹⁶⁸ հոգոյն է: Եւ¹⁶⁹ եթէ¹⁷⁰ այդ այդպէս է¹⁷¹, ապա վա՛յ¹⁷² մեղատրացս¹⁷³ եւ եղկելեացս¹⁷⁴: Առդ, ի միասին գործեցաք զչարիս եւ¹⁷⁵ ի¹⁷⁶ միասին տանջելոց եմք ի հուրն անշէ՛ղ¹⁷⁷, զի գարուն էր¹⁷⁸, եւ¹⁷⁹ ոչ սերմանեցաք սերմն¹⁸⁰ բարի¹⁸¹, ատուք էին գործելոյ¹⁸² զբարիս¹⁸³, եւ մեք¹⁸⁴ ոչ գործեցաք¹⁸⁵: Առդ, վա՛յ մեզ՝ եղկելեացս¹⁸⁶, զի անկաք¹⁸⁷ յերանութենէ կենաց¹⁸⁸: Տեսանէաք¹⁸⁹ զայլս, զի¹⁹⁰ գործէին զբարիս¹⁹¹ եւ մեք ծաղր առնէաք¹⁹², ու ոչ գիտէաք¹⁹³, եթէ¹⁹⁴ այս¹⁹⁵ ամենայն¹⁹⁶ առաջի կայր¹⁹⁷: Գոչէին քահանայքն¹⁹⁸ եւ¹⁹⁹ լսեաք եւ ծաղր առնէաք²⁰⁰ եւ²⁰¹ ոչ մտանէր²⁰² պատգամն²⁰³ Աստուծոյ ի²⁰⁴ յականջս մեր: Եւ²⁰⁵ յորժամ հառնէին²⁰⁶ վասն²⁰⁷ գեհեներին²⁰⁸, մեզ որպէս²⁰⁹ երազ թուէր²¹⁰, անարեւնեցաք²¹¹ եւ ոչ յիշեցաք զպատուիրանն²¹² Աստուծոյ: Առդ²¹³, յիրաւի²¹⁴ է դատաստանն²¹⁵

165 BD մարմնոյ BCD + է

166 BD + և

167 A հակառակութեան E չիք մարմնոյն եւ նախանձ հակառակութիւն

168 C շնութիւն և սպանութիւն և նախանձ և սնապարծութիւն սնափառութիւն հպարտութիւն փիս նախանձ հակառակութիւն եւ սնապարծութիւն D սնափառութիւն

169 BCD հոգոյ (C հոգոյն) է (BC չիք) ասէ հոգին փիս հոգոյն է եւ

170 B թէ

171 C իցէ

172 B + է մեզ

173 D մեղատրին

174 B եղկելոցս D եղկելացս

175 B զչարիսն փիս զչարիս եւ C չիք

176 D շարիսն եւ փիս զչարիս եւ ի

177 D անշիջանելին

178 C տեղի ունէաք սերմանելոյ փիս գարուն էր

179 D գարունն փիս գարուն էր եւ

180 C գսերմն D գսերմ

181 BCD + և

182 BE գործելո

183 B զբարիսն C զբարի

184 CD չիք

185 D գործեցաք

186 B եղկելոցս C չիք D եղկելացս

187 B անցաք D անկանք

188 BC կենացն

189 D տեսաք

190 BCD զի այլք (B այլքն) փիս զայլս զի

191 B զբարիս գործէին փիս գործէին զբարիս D չիք

192 D առնէաք

193 B + զպատահմունս D գիտէաք

194 BC թէ

195 C այդ

196 BCD չիք

197 BC + մեզ D կայ + մեր

198 BC + առաջի մեր D չիք գոչէին քահանայքն

199 BC + մեք ոչ D + ոչ

200 BCD չիք եւ ծաղր առնէաք

201 B չիք

202 AE մտէր C եմուտ D մտանէ

203 B պատգամքն

204 CD չիք

205 BC չիք

206 C ասէին

207 B + հրոյ

208 C գեհեներոյն

209 BCD իբրև

210 B զերազ թունայ փիս երազ թուէր

211 C անարեւնեցաք D անարեւնեցաք

212 BCD զահեղ (C + և զանաչառ) դատաստանն փիս զպատուիրանն

213 B + ի C չիք

214 C արդար E յարի

215 C են դատաստանքն փիս է դատաստանն

Աստուծոյ²¹⁶ եւ ոչ գոյ ակնարկութիւն²¹⁷ առաջի նորա, որ²¹⁸ ըստ գործոց իւրաքանչիւրոց²¹⁹ հատուցանել²²⁰»:

Յայնժամ հեծեծեալ²²¹ ասէ հոգին ցմարմինն²²². «²²³Վա՛յ ինձ, զի՞նչ²²⁴ լինիմ ես²²⁵, զի սարսեալ եմ եւ դողամ ի գնալն²²⁶ իմում²²⁷ ի վեր, եւ²²⁸ ոչ իշխեմ հայել ի հրեղէնն²²⁹, զի կոսկելով եւ հեծեծելով²³⁰ տանին զիս»:

Ասէ մարմինն²³¹. «Եւ ես²³² ի՞նչ²³³ լինիմ²³⁴, զի²³⁵ ամուր²³⁶ աշտարակ էի²³⁷ եւ փլայ, երկեալ²³⁸ սիրտ իմ եւ եղէ հաւասար գետնոյ²³⁹: Գնայունս²⁴⁰ անշարժ եղէ, խասունս եւ իմաստունս²⁴¹ յիմարեցալ²⁴², սպականեցալ²⁴³ գեղ վայելչութեան իմոյ²⁴⁴, եղծաւ կարգս²⁴⁵ ցանկալի²⁴⁶, խաւարեցալ²⁴⁷ աչք իմ²⁴⁸ լուսաւոր, սեղմեցան²⁴⁹ դրունք լսելեաց²⁵⁰ իմոց, հատաւ բարբառ²⁵¹ բերանոյ²⁵² իմոյ²⁵³, կորեաւ բանք շրթանց²⁵⁴ իմոց»:

Ասէ հոգին. «Եւ²⁵⁵ ես ի՞նչ²⁵⁶ լինիմ, զի²⁵⁷ ի²⁵⁸ հրակերպիցն²⁵⁹ սարսեալ

216 D չիք արդ յիրաւի է դատաստանն աստուծոյ
 217 BCE ակնառութիւն D հակառութիւն
 218 B այլ C և + հատուցանել
 219 BD իւրաքանչիւր ումեք (D ումեք) C իւրաքանչիւրոյ
 220 C չիք D հատուցել
 221 C հեծելով + հատաչելով D հեծեծելով
 222 B հոգին հեծեծելով ասէ *փիս* հեծեծեալ ասէ հոգին ցմարմինն C ընդ մարմինն *փիս* ցմարմինն D ցմարմին
 223 BC + արդ
 224 D ինչ
 225 B եւ զինչ լինիցիմ *փիս* զինչ լինիմ ես
 226 BCD գնալս
 227 D իմ B + և
 228 B չիք
 229 BCD հրեղէնսն (C հրեղէն + զաւրուքիսնսն), (D իշխեմ հայել ի հրեղէնսն) *փիս* իշխեմ հայել ի հրեղէնն
 230 BC ձաղելով D ձախելով
 231 E մարմին
 232 C կորեայ *փիս* եւ ես
 233 BCD զինչ
 234 B լինիցիմ
 235 BCD + որպէս
 236 C + և գեղեցիկ
 237 E էին
 238 C + և զարհուրեցաւ D երկաւ

239 E գետնո
 240 A գնայունս C գնայուն + էի և D գնայտունս E + յիմարեցայ
 241 E յիմաստուն
 242 CDE յիմարեցայ
 243 B + և պականեցաւ C + պականեցաւ պայծառ և գեղեցիկ
 244 D չիք
 245 B կառքս CD կասս
 246 BE ցանգալի C ցանկալիս + բազմաց
 247 CD խաւարեցան
 248 B աչքս *փիս* աչք իմ C + պայծառ և գեղեցիկ և
 249 B խցանս C + և խլացան D լուսաւոր փակեցան *փիս* լուսաւոր սեղմեցան
 250 D լեզվաց E լսելաց
 251 C + ի D + իմ E հաւատ բարբառոյ *փիս* հատաւ բարբառ
 252 E չիք
 253 CD չիք
 254 D կորաւ բանք շրթաց *փիս* կորեաւ բանք շրթանց
 255 C չիք B + արդ
 256 BCD զինչ
 257 B լինիցիմ *փիս* լինիմ զի
 258 D չիք
 259 C հրակերպից + հրեշտակացն DE հրայկերպիցն

եւ²⁶⁰ եւ²⁶¹ ի²⁶² վեցթեւեան²⁶³ սերովբէիցն²⁶⁴ դողամ, եւ ի դատաւորէն զահի հարեալ²⁶⁵ եւ եւ յահէ նորա հալիմ²⁶⁶»:

Ասէ մարմինն. «Եւ ես զի՞նչ լինիմ, զի անկայ երկիր²⁶⁷, մանրեցայ²⁶⁸, փտեցայ²⁶⁹ եւ լինիմ²⁷⁰ կերակուր որդանց եւ սողնոց²⁷¹»:

Ասէ հոգին. «Արդ²⁷², լուեա²⁷³ եւ հանգիր մինչեւ²⁷⁴ ի գալուստ դատաւորին²⁷⁵: Մի՞թէ յազգէ²⁷⁶ մերմէ հանդիպեսցի²⁷⁷ ի դպրութիւն, կամ ի ֆահանայութիւն²⁷⁸, կամ ի գործս²⁷⁹ արդարութեան, որ²⁸⁰ յիշեն²⁸¹ զմեզ, ի դուռն²⁸² եկեղեցոյ²⁸³ եւ²⁸⁴ պատարագաց եւ²⁸⁵ յողորմութեան²⁸⁶ ողորմի²⁸⁷ Աստուած եւ թողութիւն շնորհէ²⁸⁸ յանցանաց²⁸⁹ մերոց»:

Ասէ սուրբն Գրիգոր²⁹⁰. «Յորժամ առնէ՞²⁹¹ զհոգի²⁹² մարդոյն²⁹³, յապաղէ՞ ֆաստ²⁹⁴, եթէ²⁹⁵ փութապէս²⁹⁶ երթայ՞²⁹⁷»:

Ասէ հրեշտակն. «Մինչեւ ցայն վայր²⁹⁸ զհոգին ի վերայ մարդոյն²⁹⁹ պահեմք³⁰⁰, մինչեւ ասեն ֆահանայքն³⁰¹ «Հասատ ունելով հոգի խաղաղու-

260 D չիք

261 C չիք

262 D չիք

263 AE գ. թեւեան D գ. թեւան

264 ABE սերովբէիցն D սերովբիցն

265 BD զարհուրեալ (D զարհուրեալ) փիս զահի հարեալ

266 BCD հալիմ (B դողամ C սարսիմ) յահէ նորա փիս յահէ նորա հալիմ

267 C յերկիր անկայ D անկեալ յերկիր փիս անկայ երկիր E երկի

268 AB մանրեցայ BC + և DE մատրեցայ

269 AB փտեցայ C ընկրկեցայ ի գուք փիս փտեցայ

270 C լինելոց + եւ D եղէ

271 C չիք եւ սողնոց

272 B + է C էջ D + էջ

273 B չիք CE լուեայ D լուայ

274 A հանկիր մինչ փիս հանգիր մինչեւ

275 C գալուստն ֆրիստոսի փիս գալուստ դատաւորին

276 D յայզէ

277 B հանդիպիմք CD հանդիպի

278 BC ֆահանայութիւն

279 BE գործ B + ինչ

280 E ոչ

281 B յիշատակեն

282 BCD ձեռն

283 C եկեղեցոյ E եկեղեցոյն

284 B չիք C կամ D չիք եկեղեցոյ եւ

285 C ի պատարագ կամ փիս պատարագաց եւ E չիք

286 AE ողորմութեան C յողորմութիւն BC + միթէ D չիք

287 B ողորմեսցի

288 BCD շնորհեսցէ

289 E անցանաց

290 C + ցհրեշտակն և D գրիգորիոս + ցհրեշտակն ասայ ինձ

291 AE առնոյք CD առնոք

292 CE զհոգին C + ի

293 C մարմնոյն

294 B չիք D այստ

295 BC թէ

296 E փութապս

297 BCD զմայք փութանակի (D փութով) փիս փութապէս երթայք

298 B յայն ժամն փիս ցայն վայր CD ժամ

299 B մեռելոյն CDE մարմնոյն

300 C ունիմք

301 BCE ասէ ֆահանայն փիս ասեն ֆահանայքն D ֆահանայքն

թեան³⁰²»:^u Ել³⁰³ յորժամ երիցս³⁰⁴ անգամ³⁰⁵ ասեն, առնումք³⁰⁶ և վերանամք յերկինս:

³⁰⁷Յառաջին³⁰⁸ աստիճանին³⁰⁹ գունդք դիսաց են, եթէ³¹⁰ մեղաւոր լինի³¹¹, յառաջ գան և³¹² հազիւ³¹³ կարեմք հանել³¹⁴ ի նոցանէ:

Եւ յերկրորդն³¹⁵ տարտարոսք անագին³¹⁶ են³¹⁷, և գունդք³¹⁸ դիսաց³¹⁹ յառաջ գան և³²⁰ ասեն՝ «Տոք ի մեզ զխորհրդակիցդ³²¹ մեր³²²», և ծափս³²³ հարկանեն և ասեն³²⁴ «Այս մեր կամարարն³²⁵ է³²⁶», և բազում տանջեն³²⁷ և ապա թողուն³²⁸:

Եւ³²⁹ յերրորդ աստիճանին³³⁰ լոյս³³¹ անեղ լինի, բայց մեղաւորին մթազոյն³³² երեկի³³³, ապա³³⁴ լայ և ողբայ դառնապէս³³⁵ և³³⁶ ասէ՝ «Վա՛յ ինձ³³⁷, զի՛նչ գործեցի յերկիրն³³⁸ անցաւոր»:

302 AE չիք հոգի խաղաղութեան B + հո D խաղաղութիւն

^u Մեջբերում է գերեզմանի կարգի շարականից, աե՛ս Մաշտոց յորում աւանդին սրբազան արարողութիւնք ազգիս ըստ սահմանադրութեան սուրբ եկեղեցիոյս հայոց, Երուսաղէմ, 1896, էջ 371:

303 D չիք

304 C երրորդ D երէցն + գ

305 AE անկամ

306 BD + զհոգին C զհաստ ունելովն առնումք զհոգի մեղաւորին *փխ* առնումք

307 BCD + և

308 B յառաջի D առաջին E յառաջ

309 AE աշտիճանն C յաստիճանին

310 D յառաջ գան և ծափ ծափ հարկանեն և թէ *փխ* են եթէ

311 C չիք եթէ մեղաւոր լինի + և

312 B և յառաջ գան թէ մեղաւոր լինի *փխ* եթէ մեղաւոր լինի յառաջ գան և D չիք յառաջ գան և

313 C դժուարին

314 B մեկնել D արձակել E չիք

315 B յերկրորդումն C յերկրորդ + աստիճանին

316 B անայգին E անալին

317 B չիք

318 D գուդք

319 C գունդք բանասարկութիւն են և *փխ* տարտարոսք անագին են և գունդք դիսաց

320 D + ծափ ծափի հարկանեն և

321 E զխորհրդակիցդ

322 B տուր ի մեզ զմեր խորհրդակիցդ *փխ* տուր ի մեզ զխորհրդակիցդ մեր C զմեր խորհրդակիցդ *փխ* զխորհրդակիցդ մեր

323 BC + ծափի C ի խնդութենէն ծափս ծափի *փխ* ծափս

324 D չիք տուր ի մեզ ... ասեն

325 B այդ մեր կամարար *փխ* այս մեր կամարարն D կամարար

326 C այդ մեր սիրելին է և մեր կամարարն *փխ* այս մեր կամարարն է

327 B + զնա D + զնայ

328 C բազում ժամս հակառակին և ջանան յափշտակել ի ձեռաց մերոց և մեք բռնութեամբ կորզեմք ի նոցանէ զհոգին և վերանամք յերրորդ աստիճանն *փխ* և բազում տանջեն և ապա թողուն

329 B չիք C իսկ

330 A աշտիճանն E աստիճանն

331 B լոյս E լոյսն + երևի ապալն

332 B մեղաւորացն մթնազոյն *փխ* մեղաւորին մթազոյն

333 C մութն երկի մեղաւորին *փխ* մեղաւորին մթազոյն երեկ

334 C յայնժամ

335 E դառնապալէ

336 B չիք

337 C + մեղաւորիս

338 B յերկիր C յերկրին

